Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍՈՍԵ ՍԵՐԳԵՅԻ ԽԱՉԻԲԱԲՅԱՆԻ <<ԱՎԱԶԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ>> ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԺԹ.00.03 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԸՆՏԱՆԵԿԱՆ, ՏԱՐԻՔԱՅԻՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԽՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության արդիականությունն ու հրատապությունը պայմանավորված է հասարակության կրեատիվ ու ստեղծագործ մտածողության զարգացման, վերջիններիս արգասիքները կյանքի կոչելու, նորարարական վարքի դրսևորման ու գործունեություն իրականացնելու հանգամանքներով:

Այսօր, առավել քան երբևէ, մարդը դեռևս մանկությունից, սոցիալականացման հախուռն գործընթաց է անցնում տեղեկատվական տեխնոլոգիաների աներևակայելի զարգացման հոլովույթում, ինչի առկայության պայմաններում, ըստ էության, անձի զարգացումը, նրա անհատական առանձնահատկությունների ձևավորումն ու վարքային դրսևորումները, հոգեկերտվածքի առանձնահատկությունները, երևույթներին կրեատիվ ու ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հնարավորություններն ու ցանկությունները փոփոխությունների են ենթարկվում:

Այս համատեքստում պարադոքսն այն է, որ ահագնացող տեմպերով զարգացող աշխարհում տեխնոլոգիական և տեխնոկրատական համընդհանուր միջավայրն անձի ստեղծարարության դրսևորման և զարգացման սպառնալիք է դարձել: Բնականաբար, անհերքելի է այն փաստը, որ հոգեբանամանկավարժական գիտակարգերի առաջնահերթ խնդիրներից պետք է լինի դեռևս մանկության տարիներից անձի ստեղծարարության զարգացումն ու ամրակայումը՝ գործընթացը դիտարկելով իբրև սոցիալականացման կարևորագույն բաղադրատարր: Հեղինակը հետազոտողի խորքային դիտողականությամբ՝ ատենախոսության մեջ առաջադրված հիմնախնդրի բազմահայեցակետ դիտարկման նպատակով իրականացրել է հսկայածավալ գիտական գրականության վերլուծություն /Կ. Ռոջերս, Տ. Լյուբարտ, Ռ. Սոյեր, Ա. Մասլոու, Յ. Պոնոմարյով, Ե. Իլյին, Հ. Գարդներ, Է. Նոյմանը, Լ.

Կապաչիոնե, Մ. Միլներ, Բ. Էդվարդս և այլոք/՝ հանգելով այն համոզման, որ վերջինիս արդյունքում ստեղծարարությունը, կրեատիվիզմն առավել արդյունավետ է խթանել արվեստի, մասնավորապես՝ նկարչության ոչ ստանդարտ եղանակներով, ինչը հեղինակի կողմից հիմնավորվում է այն հանգամանքով, որ հնարավորություն է ընձեռնվում անձին հասնելու ներքին անբռնազբոսության ու ազատության, ինքնաբուխ կերպով լիարժեք դրսևորելու իր ստեղծագործական ներուժը: Ատենախոսը ուսումնասիրել է նկարչական մի նոր, ոչ ստանդարտ եղանակի՝ ավազանկարչության էությունը և առանձնահատկությունները՝ ստեղծարարության խթանման համատեքստում:

Կարևորելով ավազանկարչության, որպես ստեղծարարությունը խթանող միջոցի, համակողմանի և խորը ուսումնասիրությունը՝ ատենախոսը հետազոտողի նրբանկատորեն վերհանել է բոլոր այն առանձնահատկությունները, որոնց հաշվին մեթոդը կարող է ծառայել առաջադրված հետազոտական նպատակին: Աշխատանքում ներկայացված է ավազանկարչության՝ ատենախոսի կողմից վերհանված առանձնահատկությունների վերլուծությունը՝ ստեղծարարության կոնկրետ բաղադրիչների խթանման տեսանկյունից: Դրվատանքի է արժանի հեղինակի կողմից կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման մոդելի ստեղծումը, որի հիման վրա կազմվել է ավազանկարչության մեթոդով հեղինակային ծրագիր:

Հեղինակի կողմից գիտական հսկայածավալ գրականության ուսումնասիրությունը թույլ է տվել մեկնաբանել, որ թեպետ հիմնախնդրի վերաբերյալ առկա են տարբեր հեղինակների մոտեցումներ, այդուհանդերձ դեռ շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման: Մասնավորապես հետաքրքրական են ստեղծագործական ներուժի մասին նորովի մոտեցման պատկերացումները, ստեղծարարության՝ որպես անձնային որակի կամ կոգնիտիվ հատկության ընդունումը, ստեղծարարության զարգացման պայմանների և միջոցների հարցը, մանկական ստեղծարարության հիմնահարցը և այլն:

Ներկայացված աշխատանքում փորձ է արվել լույս սփռել որոշ կնճռոտ հարցերի վրա՝ հիմնախնդրին ցուցաբերելով նորովի մոտեցում՝ հետազոտելով ավազանկարչությունը՝ իբրև ստեղծարարության խթանման հոգեբանական մեթոդ:

Ատենախոսության տեսամեթոդաբանական հենքային կոնցեպտուալ գաղափարները, ինչպես նաև ատենախոսի փորձը հնարավորություն են ընձեռել ստեղծել նոր մի մոդել, որը ձևավորվել է առաջադրված վարկածի շուրջ՝ այն է.

ավազանկարչության նպատակաուղղված կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանմանը՝ ստեղծարարության բաղադրիչների վրա բազմաֆունկցիոնալ և համակողմանի ազդեցության շնորհիվ:

Ներկայացված աշխատանքը բնորոշվում է հետաքրքրական հարցադրումներով, գիտական հիմնավորումներով, մասնագիտական գրականության ֆունդամենտալ տեսությունների վերլուծությամբ ու վերջիններիս շուրջ նորովի գաղափարների կառուցմամբ: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն որոշակիորեն լրացնում է «Ստեղծագործական կապի» տեսության շարունակականությունը մարդակենտրոն հոգեթերապիայի ներքո, մասնավորապես այն համատեքստում, որ ստեղծարարությունը շարժիչ ուժ է, որին ձգտում է անձն իր ողջ կյանքում:

Գիտականորեն հիմնավորված է հետազոտության փորձարարական հատվածի կազմակերպման, արդյունքների վերլուծության, գործնականորեն կիրարկության ապահովման ողջ ընթացքը, ինչն, անշուշտ, թույլ է տալիս ունենալ հստակ կարծիք իրականացված եռափուլ գիտափորձի գիտականության, հետազոտության արդյունքների վալիդության և ճշգրիտ վերջնարդյունքների ձևակերպման մասին: Աշխատանքում հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի մոտեցման յուրատիպությունը: Մասնավորապես այն տեսանկյունը, որ ավազանկարչությունը հեղինակի կողմից վերլուծության է ենթարկվել՝ իբրև հոգեբանական աշխատանքի մեթոդ, դուրս են բերվել ավազանկարչության մեթոդի էական առանձնահատկությունները և դրանց դերը ստեղծարարության առանցքային բաղադրիչների խթանման ուղղությամբ:

Անշուշտ, իրականացված աշխատանքը նոր և էական ներդրում է հոգեբանական գիտակարգում, ինչը բնորոշվում է և՛ տեսական և՛ գործնական նշանակությամբ:

Գիտական հետաքրքրություն են ներկայացնում ատենախոսի կողմից առաջ քաշած դրույթները, որոնք հիմնավորվել են կատարված հետազոտությամբ: Առանձնակի կարևորում ենք այն գաղափարը, որ ստեղծարարությունը բաղկացած է ստեղծագործական ներուժի և ստեղծագործական ակտիվութան կառուցվածքային բաղադրատարրերից, որոնք իրենց ամբողջականության մեջ ներառում են ինքնատիպությունը, երևակայությունը, հետաքրքրասիրությունը, ռիսկի դիմելու հակվածությունը, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամությունը, որոնց վրա նպատակաուղղված ներգործությունը դրդում է ստեղծագործական ակտիվության և արդյունքում նպաստում ստեղծարարության խթանմանը:

Կարևորում ենք հատկապես ատենախոսի կողմից ներկայացված ավազանկարչության հեղինակային ծրագրի առկայությունը, ինչի կիրարկումը հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականի ստեղծարարության բաղադրիչների խթանմանը՝ մասնավորապես գործընթացի դինամիկության ու պարզության, նկարչական նյութի անորոշության, նկարելու միջոցների անսովորության, ինչպես նաև գործընթացի վրա կենտրոնացնելու հնարավորության շնորհիվ:

Գիտականորեն հիմնավորված են ատենախոսության եզրակացությունները: Աշխատանքը բնորոշվում է ամբողջականությամբ ու կուռ կառուցվածքով:

Այդուհանդերձ առկա են որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ կցանկանայինք լսել ատենախոսի մեկնաբանությունները:

Մասնավորապես՝

1. Աշխատանքում պարբերաբար (էջ 58, էջ 72 և այլն) շեշտադրվում է ստեղծարարության պրոցեսի կարևորումն արդյունքի նկատմամբ, սակայն փաստելու համար, որ երեխայի մոտ խթանվել է ստեղծարարությունը, ատենախոսի կողմից գնահատվել է արդյունքը: Արդյո՞ք սա չի հակասում որդեգրած մոտեցմանը:

2. Ձևավորող գիտափորձում կար «Շրջաններ» տեխիկան, որն, ինչպես նշած է աշխատանքում, նույն Է. Վարտեգի «Շրջաններ» մեթոդիկան է՝ ադապտացված ավազանկարչության համար: Վերջնական գնահատման փուլում երևում է, որ երեխաները բոլոր կամ գրեթե բոլոր շրջանները կարողացել են վերածել պատկերի, ինչը նախնական գնահատման համեմատ լուրջ դինամիկա է: Ինչպես կարող ենք վստահ լինել, որ տեղի չի ունեցել ուսուցողական գիտափորձ, ինչը համատեղելի չէ ստեղծարարության հետազոտման և գնահատման հետ:

3. Անհասկանալի է, թե ինչու է ավազի և ավազանկարչության առանձնահատկությունների վերաբերյալ վերլուծությունը ներկայացված աշխատանքի հետազոտական, այլ ոչ տեսական մասում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է իսկապես մեծածավալ տեսական և փորձարարական հետազոտություն, որը բնորոշվում է կիրառականությամբ:

Սոսե Սերգեյի Խաչիբաբյանի կողմից ներկայացված ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն) մասնագիտությամբ <<Ավազանկարչությունը որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց>> ատենախոսությունն ավարտուն, գիտական պատշաճ մակարդակով գրված աշխատանք է:

Այն իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Սոսե Սերգեյի Խաչիբաբյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական,խմբային գործունեություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ն.Հակոբյան

Ն. Ռ. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ Մ. Սարգսյան

16. 09.2021թ.